ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի հուլիսի 7-9-ը Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Սուրեն Պապիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի հուլիսի 7-9

4. Հրավիրող կողմը

«Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության

5. Գործուղման նպատակը

Մասնակցել ՀՀ սահմանամերձ համայնքների զարգացման ու ամրապնդման հիմնախնդիրների լուծմանը նվիրված գործարար համաժողովին

6. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում քննարկվել են սահմանամերձ համայնքներում առկա հիմնախնդիրներին, դրանց լուծման, ներդրումային միջավայրի բարելավման, բիզնես ծրագրերի իրականացման, այլընտրանքային էներգաարտադրության և սահմանամերձ համայնքներում միջազգային կազմակերպությունների կողմից իրագործվող նախագծերի վերաբերյալ մի շարք հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2018թ. հուլիսի 8-ին տեղի ունեցավ Սահմանամերձ համայնքների զարգացման ու ամրապնդման հիմնախնդիրների լուծմանը նվիրված գործարար համաժողովը: Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը ողջունեց Երևանից ժամանած պատվիրակությանը և միջոցառման մյուս մասնակիցներին՝ ներկայացնելով, որ համաժողովը նպատակ ունի ծառայեցնել Ռուսաստանում առկա հայկական գործարար ներուժը Հայաստանի սահմանամերձ գյուղական համայնքների տնտեսական կարողությունների զարգացման, ներդրումների ներգրավման ու բնակչության կյանքի բարելավման համար:

Համաժողովի ընթացքում հանդես եմ եկել բացման խոսքով՝ շնորհակալություն հայտնելով Ռուսաստանի հայերի միությանը համաժողովի կազմակերպման, հայրենիքում առկա հիմնախնդիրների նկատմամբ գործնական հոգատարություն ցուցաբերելու համար: Ներկայացրեցի սահմանամերձ համայնքների տնտեսական զարգացման, սոցիալական ապահովության, ինչպես նաև բնակիչների անվտանգության խնդիրները, առանձնացնելով այն աշխատանքները, որոնք իրականացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանամերձ համայնքներում համակարգման ենթակա հարցերի լուծման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տարվող աշխատանքների շրջանակներում, մասնավորապես՝ սահմանամերձ համայնքների անձնագրերի մշակումը, համայնքներում առկա հիմնական խնդիրների գույքագրումը: Տեղեկացրեցի, որ սահմանամերձ համայնքներում գործարար ծրագրերի իրականացումը խրախուսելու նպատակով Կառավարության կողմից այդ համայնքներում սահմանվել են հարկային արտոնություններ, բացի այդ ոչ պետական կազմակերպությունների և գործընկեր միջազգային կառույցների կողմից սահմանամերձ համայնքներում իրականացվում են տարաբնույթ ծրագրեր, որոնց շարքում առանձնացրեցի Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Ինտեգրված աջակցություն

գյուղական համայնքների զարգացմանը. համայնքների դիմակայունության ամրապնդում» ծրագիրը, ԵՄ-ի հետ Նոյեմբերյանում իրականացվող «ՀՀ Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում» ծրագիրը և մի շարք այլ նախաձեռնություններ:

Այնուհետև ելույթներով հանդես եկան ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված անդամները՝ ներկայացնելով քննարկվող հարցերի լուծման իրենց տեսակետները: Անդրադարձ կատարվեց Հայաստանում ներդրումային միջավայրի համալիր բարեփոխումների ընթացքին, օտարերկրյա ներդրողների համար ներդրումային գրավչության բարձրացման, հելիոֆիկացման, ինքնավար էներգաարտադրության, գյուղատնտեսության զարգացման, ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր հարկային միջավայրի ձևավորման, համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծման, որոշակի դեպքերում հարկերից ազատման արտոնությունների տրամադրման և մի շարք այլ հարցերին:

Ելույթներով հանդես եկան նաև ռուսաստանաբնակ հայ գործարարները, որոնք պատվիրակության անդամների հետ քննարկեցին գործարար ծրագրերի իրականացմանն առնչվող մի շարք մտահոգություն ներկայացնող հարցեր:

Մոսկվա այցի ընթացքում եղա նաև Մոսկվայի Հայոց առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպության եկեղեցական համալիրում, որտեղ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Եզրաս Արքեպիսկոպոս Ներսիսյանի ուղեկցությամբ շրջեցինք համալիրով, այցելեցինք տարածքում գտնվող առաջնորդարանի շենք, Սուրբ Պայծառակերպություն մայր տաճար և թանգարան:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ավարտին կրկին շնորհակալություն հայտնեցի սփյուռքի հայրենակիցներին երկրի գործընթացների հանդեպ ցուցաբերած հետաքրքրվածության համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ համաժողովում ծավալված շահագրգիռ քննարկումների արդյունքում հնարավոր կլինի ձևակերպել նոր

գաղափարներ, մշակել նախագծեր, որոնք իրենց կիրառական նշանակությամբ և գործնական արժեքով կնպաստեն սահմանամերձ համայնքներում կյանքի որակի բարձրացմանն ու բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը: Վստահեցրի, որ Հայաստանում գործարարությամբ զբաղվելն այսուհետ ապահով է, ավելին՝ ներդրում կատարող գործարարների իրավունքների նկատմամբ ցանկացած ոտնձգություն իր իրավական գնահատականը կստանա օրենքի շրջանակներում:

9. Գործուղվողը

Սուրեն Պապիկյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

11.07.2018թ.